Գարուն 2026

BURRTEC-Ի ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հովանավորվում է Burrtec Waste Industries-ի կողմից՝ Բըրբենքի առևտրային, բազմաբնակարանային և արդյունաբերական հաճախորդների համար

Կոնտակտային տվյալներ

Burrtec Waste Industries
25772 Springbrook Avenue
Santa Clarita, CA 91350

Ավտոմատացված վճարման ծառայություն
(888) 298-5161

Հաճախորդների ծառայություն
(661) 222-2249

Աշխատանքային ժամեր
երկուշաբթի-ուրբաթ
8:00 am-ից 5:00 pm

վեբկայք
Burrtec.com

Հետևեք մեզ

Բիզնեսի տարածքի պահպանում

Ձեր բիզնեսի տարածքը մաքուր պահելու համար հետևեք այս պարզ խորհուրդներին.

- Կտրատեք բոլոր ստվարաթղթերը: Այն կօգնի կանխել գերլցվածությունը, որի պատճառով անիվները կանգ են առնում, և տեղ ազատել վերամշակման աղբամանում՝ ավելի շատ վերամշակվող նյութերի համար:
- Հավաքեք աղբը ձեր տարածքի և կայանատեղիի ներսում և դրա շրջակայքում: Համոզվեք, որ աղբը չի լցվում փողոցներ կամ ջրահեռացման համակարգ:
- Եթե ձեր աղբամանը լցված է նախքան հաջորդ պլանավորված աղբահանումը, կարող եք զանգահարել Burrtec-ին և լրացուցիչ աղբահանություն խնդրել՝ հավելյալ վճարի դիմաց:
- Մի լցրեք աղբամանները կամ թափոնի խտացուցիչները հեղուկ թափոններով և դրանք ջրցանելով մի մաքրեք: Հեղուկների բացառումը նպաստում է շրջակայքում դրա արտահոսքի, ինչպես նաև տհաճ հոտի, նվազեցմանը:
- Տարածքը ջրով մաքրելու փոխարեն այն ավելը ոչ միայն խնայում է ջուրը, այլև կանխում է նյութերի թափվելը ջրահեռացման համակարգ:

ԻՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԲԻԶՆԵՍՆԵՐԻ ՎՐԱ

SB 1383-ի համաձայն՝ բիզնեսներից պահանջվում է.

- Բաժանորդագրվել Burrtec-ի կողմից տրամադրվող օրգանական թափոնների հավաքման ծառայությանը:
- Տեղեկատվություն տրամադրել նոր վարձակալներին՝ նախքան բնակարան տեղափոխվելը, կամ տեղափոխվելուց հետո 14 օրվա ընթացքում:
- Արգելել աշխատողներին լցնել օրգանական թափոնը այդ տեսակի թափոնի համար չնախատեսված աղբամանի մեջ:
- Ապահովել, որ աշխատողների, կապալառուների, վարձակալների և հաճախորդների համար հասանելի լինեն համապատասխան քանակի, չափի և հարմար վայրերում տեղադրված աղբամաններ՝ պատշաճ պիտակներով և գույնով:
- Տրամադրել աղբամաններ բոլոր տեսակի թափոնների, այդ թվում՝ աղբի, սննդի մնացորդների և վերամշակվող նյութերի հավաքման համար՝ բոլոր այն տարածքներում, որտեղ հաճախորդների համար նախատեսված են աղբահանության տարաներ, բացառությամբ զուգարանների:
- Տարեկան կտրվածքով տեղեկատվություն տրամադրել աշխատողներին, կապալառուներին, վարձակալներին և հաճախորդներին վերամշակման, օրգանական թափոնի հավաքման պահանջների և օրգանական թափոնի պատշաճ տեսակավորման վերաբերյալ:

ՈՒՏԵԼԻ ՍՆՆԴԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ՝ ՍՆՆԴԻ ՎԱՏՆՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ահա մի քանի ձևեր, որոնցով բիզնեսները կարող են նվազեցնել սննդի թափոնները.

- **Պլանավորել և հետևել.** Պլանավորեք սնունդը՝ ըստ պահանջարկի, և հետևեք թափոններին՝ բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար:
- **Ճաշացանկի կազմում.** Ճաշացանկում ներառեք հատուկ ուտեստներ, որոնցում օգտագործվում են պիտանելիության ժամկետի սպառմանը մոտ գտնվող բաղադրիչներ: Հեռացրեք այն ապրանքները, որոնք լավ չեն վաճառվում:
- **Անձնակազմի վերապատրաստում.** Վերապատրաստեք անձնակազմին սննդի թափոնները նվազագույնի հասցնելու, այդ թվում՝ ջերմաստիճանի պատշաճ կառավարման և սննդի պաշարների ռոտացիայի վերաբերյալ:
- **Սննդի պատշաճ պահեստավորում.** Սնունդը պահեք սառնարանում, իսկ հացահատիկների համար օգտագործեք հերմետիկ տարաներ:
- **Հետևեք արտադրությանը.** Կշռեք սնունդը արտադրության յուրաքանչյուր փուլում՝ արտադրական կորուստը հայտնաբերելու և շտկելու համար:

Կալիֆորնիայում արտադրվում է ողջ երկրի մրգերի և բանջարեղենի գրեթե կեսը, չնայած դրան՝ Կալիֆորնիայի բնակիչներից 8-ից 1-ը պայքարում է սննդային անապահովության կամ առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ սննդի անհասանելիության դեմ:

Սենատի թիվ 1383 օրինագծի (SB 1383) ընդունմամբ Կալիֆորնիայի նահանգը պարտադիր է դարձրել ավելացած սննդի վերականգնումը՝ շրջակա միջավայրի վրա մեթան գազի ազդեցության դեմ պայքարելու համար: Օրինագիծը կոմերցիոն ուտելի սնունդ գեներացնողներից պահանջում է.

1- Կազմակերպել ավելորդ ուտելի սննդի առավելագույն չափով վերականգնում, որպեսզի դրանք չհայտնվեն աղբավայրերում:
2. Ձեռք բերել գրավոր համաձայնություն ձեր բիզնեսից ուտելի սնունդ ընդունող ցանկացած/բոլոր գործընկեր կազմակերպությունների/ ծառայությունների հետ:
3. Պահպանել արձանագրություններ ուտելի սննդի վերականգնման բոլոր գործողությունների մասին և դրանց կտրոնները:
4. Ամեն տարի տրամադրել սննդի վերականգնման կազմակերպության (կազմակերպությունների) հետ կնքված գրավոր համաձայնագր(երի)ի պատճենները:

ՍՆՆԴԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- California Association of Food Banks (cafoodbanks.org)
- Feeding America (Inland Empire) (feedingamericaie.org)
- Food Finder (foodfinder.us)
- Los Angeles Regional Food Bank (lafoodbank.org)

Սննդի պահանջների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ calrecycle.ca.gov

Տոների ժամանակացույց

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ծառայությունները ընդհատվում են հետևյալ տոներին.

Հիշատակի օր	Անկախության օր	Աշխատանքի օր
Գոհաբանության օր	Սուրբ Ծննդյան օր	Նոր տարի

Եթե տոնը համընկնում է աշխատանքային օրվա հետ, մնացած շաբաթվա աղբահանությունը հետաձգվում է մեկ օրով: Ծառայության ընդհատում կամ ուշացում չի լինում այն դեպքում, երբ տոնը շաբաթ կամ կիրակի օր է:

6BUR1

Սենատի օրինագիծ 1383

Կալիֆորնիայի Սենատը ընդունել է օրինագիծ, որը պահանջում է օրգանական թափոնի հեռացման 75%-ով կրճատում: Բոլոր առևտրային ընկերություններից պահանջվում է վերամշակել օրգանական թափոնը, այդ թվում՝ սննդի թափոնները:

Օրգանական թափոնները քայքայվում են աղբավայրում՝ արտանետելով զգալի քանակությամբ ջերմոցային գազեր, որոնք առաջացնում են հանրային առողջության և անվտանգության հետ կապված խնդիրներ, ինչպիսիք են՝ ասթման, կլիմայի գլոբալ փոփոխությունը, ծայրահեղ եղանակային պայմանները և բնական աղետները: Օրգանական թափոնը աղբավայր ուղարկելու փոխարեն այն կոմպոստացնելով՝ կարող ենք փակել այս բացասական շղթան՝ միաժամանակ ստեղծելով սննդարար նյութերով հարուստ հողային հավելանյութ, որը պատրաստ կլինի օգտագործելու ֆերմերային տնտեսություններում և այգիներում:

Վերամշակվող նյութերի աղտոտվածության մոնիթորինգի նահանգային պահանջ

Կալիֆորնիա նահանգի թիվ SB 1383 օրենքը պահանջում է իրավասու մարմիններին վերահսկել աղբի, վերամշակման և օրգանական նյութերի տարաները՝ աղտոտումը նվազեցնելու համար: Վերամշակման կամ օրգանական նյութերի հավաքման տարա(ներ)ում աղբի և այլ աղտոտիչների առկայության դեպքում կարող է վճար գանձվել կամ աղբահանություն չկատարվել: Եթե հայտնաբերվի աղտոտվածություն, աղբամանի կափարիչի վրա կփակցվեն աղտոտման պիտակներ (ինչպես ցույց է տրված աջում): Առաջին ծանուցումից հետո հաճախորդներից կարող է գանձվել աղտոտման վճար, և աղբամանը չի սպասարկվի որպես վերամշակվող աղբ, այլ հետագայում այն կսպասարկվի որպես ընդհանուր աղբ: Խնդրում ենք նկատի ունենալ. եթե որևէ աղբամանի մեջ տեղադրվեն վտանգավոր կամ կենսաբանորեն վտանգավոր նյութեր, ավտոմատ կերպով կհաշվարկվի աղտոտման վճար: Չգիտե՞ք, թե ինչ պետք է լցվի յուրաքանչյուր աղբամանի մեջ: Աջակցության համար դիմեք Burrtec-ի հաճախորդների սպասարկման ծառայություն՝ (661) 222-2249 հեռախոսահամարով: Ինչպես միշտ, շնորհակալ ենք ձեր շարունակական աջակցության և համագործակցության համար:

Օգնե՛ք մաքուր պահել սննդային թափոնների վերամշակումը

Սենատի թիվ 1383 օրինագծով պահանջվում է **օրգանական թափոնների հեռացման 75%-ով կրճատում:** Բոլոր բնակելի շենքերը և առևտրային բիզնեսները պարտավոր են մասնակցել և **վերամշակել օրգանական թափոնները, ներառյալ սննդի և լանդշաֆտային թափոնները:** Սննդային թափոնները հավաքվում, վերամշակվում և վերածվում են նոր արտադրանքի, ինչպիսիք են՝ կոմպոստը, ցանքածածկը և վերականգնվող գազը: **Տեսակավորման ընթացքում աշխատողները պետք է հեռացնեն ոչ ընդունելի նյութերը, ինչպիսիք են աղբը, պլաստիկ տարաները, ապակին և այլ աղտոտիչները:**

Ձեր աղբամանները աղտոտիչներից զերծ պահելը կօգնի անփոփոխ պահել վերամշակման ծախսերը և պահպանել նյութերի մաքրությունը՝ նոր արտադրանք ստանալու համար:

Տարածեք ուղերձը.

«Օգնե՛ք մաքուր պահել սննդային թափոնների վերամշակումը»:

ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ – ԻՆՉԸ՝ ՈՒՐ Է ԹԱՓՎՈՒՄ

Սև աղբամանը/տարան աղբի համար է

ՈՂՋ ԱՂԲԸ ԴՐԵՔ ՏՈՊՐԱԿԻ ՄԵՋ – ՄԻ ԼՑՐԵՔ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆ

ՍԵՎ ԱՂԲԱՄԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՅՈ

- ✔ Կակտուս
- ✔ Հագուստ
- ✔ Մանկական տակդիրներ
- ✔ Սպասք
- ✔ Ճաղկամաններ
- ✔ Փողրակներ
- ✔ Կենդանիների սննդի տոպրակներ
- ✔ Պլաստիկ տոպրակներ կամ փաթեթավորում
- ✔ Կենդանիների թափոններ
- ✔ Պլաստիկ խաղալիքներ
- ✔ Պլաստիկ սպասք
- ✔ Ջերմակծկվող փաթեթավորում
- ✔ Կեղտոտված թղթե արտադրանք
- ✔ Ձողիկներ
- ✔ Թաց անձեռոցիկներ

ՈՉ

- X Մարտկոցներ
- X Էլեկտրոնային թափոններ
- X Վտանգավոր թափոններ
- X Տաք մոխիր
- X Դյուրավառ նյութեր
- X Լյումինեսցենտային լամպեր
- X Սննդի թափոններ
- X Լանդշաֆտային թափոններ
- X Սարքավորումներ
- X Ներկ
- X ունևաքիմիկատներ
- X Յուղ
- X Վերամշակվող նյութեր
- X Սուր առարկաներ
- X Անվադողեր

Կապույտ աղբամանը/տարան վերամշակվող թափոնի համար է

ՏՈՊՐԱԿԻ ՄԵՋ ՄԻ ԴՐԵՔ ՎԵՐԱՄՇԱԿՎՈՂ ԹԱՓՈՆԸ

ԿԱՊՈՒՅՏ ԱՂԲԱՄԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՅՈ

- ✔ Աէրոզոլային տարաներ (դատարկ)
- ✔ Այումինե տարաներ
- ✔ Բրոշյուրներ
- ✔ Ստվարաթուղթ
- ✔ Տուփեր
- ✔ Կատալոգներ
- ✔ Համակարգչի թուղթ
- ✔ Ծրարներ
- ✔ Ապակե շշեր և բանկաներ
- ✔ Թափոն փոստ
- ✔ Թերթեր
- ✔ Թղթային արտադրանք
- ✔ #1 - #7 պլաստիկ
- ✔ Թիթեղյա տարաներ
- ✔ Թղթի անձեռոցիկների տուփեր
- ✔ Փաթեթավորման թուղթ

ՈՉ

- X Մարտկոցներ
- X Պղպջակային փաթեթավորում
- X Գորգ
- X Հագուստ
- X Մանկական տակդիրներ
- X Սպասք
- X Էլեկտրոնային թափոններ
- X Կահույք
- X Փողրակներ
- X Հայելիներ
- X Կենդանիների սննդի տոպրակներ
- X Պլաստիկ տոպրակներ կամ փաթեթավորում
- X Պլաստիկ խաղալիքներ
- X Կեղտոտված թղթե արտադրանք
- X Փափուկ կենդանիներ
- X Մոմապատ թուղթ

Կանաչ աղբամանը/տարան օրգանական թափոնի և սննդային թափոնի համար է

ՏՈՊՐԱԿԻ ՄԵՋ ՄԻ ԴՐԵՔ ԿԱՆԱՉ ԹԱՓՈՆԸ ՍՆՆԴԻ ԹԱՓՈՆԸ ՊԵՏՔ Է ԴՐՎԻ ՏՈՊՐԱԿԻ ՄԵՋ

ԿԱՆԱՉ ԱՂԲԱՄԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՅՈ

- ✔ Մշտադալար բույսեր
- ✔ Չորացած բույսեր
- ✔ Ծաղիկներ
- ✔ Խոտի կտրվածքներ
- ✔ Ձիու գոմաղբ
- ✔ Տերևներ
- ✔ Արմավենու տերևներ
- ✔ Էտվածքներ և ոստեր
- ✔ Թփերի կտրվածքներ
- ✔ Փոքր ճյուղեր
- ✔ Չմշակված փայտ
- ✔ Մոլախոտեր

ՈՉ

- X Մարտկոցներ
- X Կակտուս
- X Բետոն
- X Աղբ
- X Էլեկտրոնային թափոններ
- X Դյուրավառ նյութեր
- X Ապակի
- X Վտանգավոր թափոններ
- X Հեղուկներ
- X Մետաղ
- X Կենդանիների թափոններ
- X Պլաստիկ
- X Քարեր

Տոպրակի մեջ դրված սննդի թափոններ, ինչպիսիք են.

- ✔ Հաց
- ✔ Սուրճի մրուր
- ✔ Եփած միս և ոսկորներ
- ✔ Կաթնամթերք
- ✔ Ձվի կճեպներ
- ✔ Ձուկ
- ✔ Սննդով կեղտոտված թուղթ
- ✔ Սննդի թափոններ և մնացորդներ
- ✔ Մրգեր
- ✔ Բորբոսնած կամ փչացած սնունդ
- ✔ Բանջարեղեն